

INSTITUTE OF MATHEMATICS
SARAJEVO

On the ... of ...



1993

... of ...

ՀԱՅՔ Հաստատությունը սույն տեղեկագրի միջոցով հրատարակում է իր գիտահետազոտական-ծրագրային աշխատանքների արդյունքներն ու իր տարբեր հանձնախմբերի ուսումնասիրությունների եւ տեսակետների քրկնարկման եզրակացությունները: Տեղեկագրում տեղ եւն գտնում նաեւ ՀԱՅՔ Հաստատության հետ գործակցող գիտահետազոտական հաստատությունների ու անհատ մասնագետների աշխատություններ:

ՀԱՅՔ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՉՈՒՄԸ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅՔ Հաստատության կոչումն ու նպատակը կայանում է հայ ազգային գոյատեման եւ զարգացման համար ամենակենսական նշանակություն ունեցող գաղափարները, կարիքներն ու խնդիրները ըմբռնելու, վերլուծելու եւ դրա հիման վրա՝ տարբեր բնագավառների ազգային ամենաբարենպաստ քաղաքականությունները առաջարկելու: մեջ:

ՀԱՅՔ Հաստատությունը, իր սկզբունքի համաձայն, ազգային խնդիրներին մոտենում է գիտական օբյեկտիվությամբ եւ համահայկական չափանիշով ու հեռանկարով եւ բացարձակապես գերծ է որեւէ հատվածական շահագրգռվածությունից եւ կամ ազդեցությունից:

ՀԱՅՔ Հաստատության գործունեության հիմնական մասը կազմում է՝

ա) Հայ ազգային ամենակենսական գաղափարների ու խնդիրների բարձրացման, հստակեցման եւ դրանց գործնական լուծման համար՝ գիտահետազոտական ծրագրային աշխատանքների կատարումը, գործակցելով համապատասխան գիտահետազոտական հաստատությունների եւ անհատների հետ:

բ) Այդ աշխատանքների արդյունքները հայության տարբեր հատվածներին, շրջանակներին ու խավերին մատչելի դարձնելը՝ տարբեր մակարդակներով եւ ձեւերով:

ՀԱՅՔ Հաստատությունը հիմնադրված է եւ ղեկավարվում է, եւ կամ աջակցություն է գտնում հայության ճակատագրով մտահոգ եւ կյանքի այլազան բնագավառներում եւկան փորձառությամբ, տարբեր վայրերում ապրող անձանց կողմից:

ՀԱՅՔ Հաստատությունը որեւէ ձեւով չի կապված, չի ազդված ու առավել եւս չի ղեկավարվում որեւէ քաղաքական, պետական կամ այլ նման կազմակերպության կողմից:

ՀԱՅՔ Հաստատությունը ազգային շահերին հետեւող, գիտահետազոտական ծրագրային բնույթի գործունեությամբ, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, լրիվ անկախ ընկերակցություն է:

ՀԱՅԵՐ ԵՎ ՀԱՅՔ

Վերացականը եւ թանձրացականը ազգային ոլորտում

Մեր ազգային կյանքի ընթացքը մեզ կանգնեցրել է երկընտրանքի առջեւ: Մենք հարկադրված ենք ընտրություն կատարել օրգանականի (սեփականի) եւ ոչ օրգանականի (ուրիշի, հնարավոր է նաեւ՝ որեւէ մեկին չպատկանողի, «տիեզերաքաղաքացիականի»), կենդանիի (կոնկրետի, արդյունավետորեն հակասականի) եւ մեռյալի (վերացականի, անկենդանորեն միակողմանիի) միջեւ: Տեսականորեն նման ընտրությունը որեւէ դժվարություն չի ներկայացնում. միայն սեփական ժողովրդի թշնամին (այն էլ՝ ոչ թե հերյուրյալ, ինչպես 37—ին, այլ իսկական թշնամին) դեպի ապագա տանող մայրուղու փոխարեն կգերադասեր նրան մղել փակուղի: Սակայն գործնականում այդ տարբեր հնարավորությունները կարելի է հեշտությամբ շփոթել մեկը մյուսի հետ՝ որպես «լուսավոր ապագա» ընկալելով, ասենք, լուսի նշույլ անգամ չպարունակող խավարը: Այդ շփոթը կարող է լինել թե՛ անձնական նախասիրության, թե՛ տեղի ունեցողի մեր սահմանափակ ըմբռնման եւ թե՛ վերջապես, բազում անկանխատեսելի հանգամանքների հետեանք: Այժմ, հետադարձորեն, հեշտ է պարսավել դարասկզբի հեղափոխականներին, բայց չէ՞ որ նրանցից շատերի՝ մեզ հետ միասին դեպի դժոխք տանող ճամփան իսկական բարի մտադրությունների ճամփա է եղել: Արդարության փափագը հեղափոխության կործանարար տարերքի երկյուղից զորեղ գտնվեց լուսավոր եւ սուրբ հոգիների՝ Տերյանի ու Չարենցի, Բլոկի ու Վերհառնի համար... Իսկ ամենախմաստունները աշխարհի գործերին մասնակցում էին որոշ ներքին օտարումով, բայց չէ՞ որ մասնակցում էին:

«Հայք» հաստատության տեղեկագրի ձեռնարկած այս քըննարկումը, ամենայն հավանականությամբ, կնպաստի մեզ համար տեսականորեն նախապես պարզելուն, թե մենք ի՞նչ ենք փափագում (ասենք՝ լինել ազատ, ստեղծագործ, արժանապատիվ կյանքով արյուղ ժողովուրդ), այլեւ (որը հատկապես եական է) այն, թե ինչպե՛ս ենք պատկերացնում մեր այդ փափագածը (օրինակ՝ ժողովրդի ազատությունը, ստեղծագործականությունը, արժանապատվությունը). մի բան, որը հնարավորություն կտա ավելի գիտակցորեն ընտրելու մեր հետագա ուղին կամ գոնե այսուհետեւ ապրելու սթափ կյանքով: Դա առավել եւս անհրաժեշտ է համազգային-պետական մակարդակում ինքնուրույնաբար մտածելու ու գործելու, պատասխանատվություն ստանձնելու սովորության՝ մեզ հատուկ պակասի առկայությամբ (պատասխանատվությունը միշտ էլ կապված է ինքնուրույնության-գիտակցականության հետ), որը հետեանք է պետականության դարավոր բացակայության եւ, հատկապես, Միության կազմում ամբողջատիրության տասնամյակներին նախաձեռնությունից զուրկ գոյատեւման: Անգամ եթե ավալ բանավեճը գործնական արդյունքի չհասցնի, միեւնույնն է, մեզ կմնա կատարած պարտքի մխիթարական զգացողությունը:

Նախնականորեն նշենք միայն հետեւյալը. վերացական (ուստի եւ մեռյալ-անագատ) է յուրաքանչյուր միակողմանի պահ, իսկ վերացականությունը հաղթահարելու համար այն պետք է զուգակցվի իրեն հակադիր ու լրացնող, ինքնին նույնքան միակողմանի պահով. մի բան; որի արդյունքը կարող է լինել եռակի՝ փոխբախվող բեռներից մեկի կամ երկուսի կործանում (օր.՝ ստալինականություն), միախառնվող բեռների չեզոքացում-ձահձուցում (օր.՝ բրեժնեականություն), վերջապես, բեռների կենդանի-ազատ փոխգործողություն՝ միաժամանակ բախում եւ միախառնում, երբ յուրաքանչյուր կողմ պահպանում է իր յուրակերպությունը, բայց եւ թափանցում մյուսի մեջ՝ ստեղծելով բարձրագույն որակ, որը ժամանակին մեզ մոտ

տարածված «հեգելախառն» եզրաբանությամբ կոչվում էր «հակադրությունների միասնություն եւ պայքար»: Բեռեռային պահերի հարաբերակցության՝ կենսական հագեցածության առումով այդ հիրավի բարձրագույն տարատեսակը կոչենք «ներլարուն ներդաշնակություն», նշենք, որ հենց վերջինս է բնորոշվում օրգանականության, դինամիկության, ավելին՝ համընդհանուրն ու եզակին ներդաշնակող յուրակերպության (առանձնահատուկի), էությունն ու երեւոյթը ի մի բերող իրականության, այլեւ այս բոլորն ամփոփող թանձրացականության (կոնկրետության), մի խոսքով՝ ազատությամբ ներքնորեն օժտված լինելու հատկանիշներով, - եւ այդ ճշտումը կատարելուց հետո շարունակենք մեր ձեռնարկած տեսությունը: Ստորեւ փորձ է արվում քննել կոնկրետ-կենդանիի (ինչպես նաեւ՝ վերացական-մեռյալի) խնդիրը աշխասարակ ազգայինի եւ մասնավորապես մեր այժմյան դրության մեջ նրա տարբեր բեկումների հարաբերությամբ:

Բուն իմաստով կենդանի կամ, նույնն է, զարգացող եւ ինքն իրեն անդադրում վերստեղծող կյանքում միմյանց բախվելով՝ միահյուսվում են երեք սկզբունքներ. մասնավորապես ժողովրդական տարերքի շրջանակում դրանք են՝ բնութենական կամ ֆիզիկական (երկրածեւաբանական-կենսաբանական= արյունակցական-ցեղակցական կամ գենետիկական), վերբնութենական-մետաֆիզիկական (բանական-ոգեղեն) եւ դրանք ի մի բերող վերբնութենական-բնութենական սկզբունքները: Վերջին (երրորդ) սկզբունքն այն է, ինչը հնում խորամտորեն կոչվել է «ժողովրդական հոգի»՝ ժողովրդի փսյուքեա, նրանում բուն ժողովրդայինը կամ դիցաբանական-խորհրդանշային դրսետրմամբ՝ մշակույթը: Տվյալ ժողովրդի՝ ինքնին վերացական-ընդհանուր մետաֆիզիկական էությունը, իսկ վերջինիս միջոցով՝ աշխասարակ ժողովրդի՝ առավել վերացական համընդհանուր էությունը առկայանում եւ անհատականանում է նրա կյանքի (գոյի եւ դարձի)՝ ինքնին նույնքան վերացական եզակի

իրակություններում, եւ այդ առկայացման ու անհատականացման եղանակը (յուրաքանչյուր ժողովրդի նկարագրում տպավորված որոշակիությունը) հենց այդ հոգին է՝ յուրակերպ-առանձնահատուկի պահը, ուր կերտվում է ժողովրդական տարերքի իրականությունը եւ կատարվում վերացականից կոնկրետ փոխակերպումը. կոնկրետ, որն առաջանում է տվյալ ժողովրդական կազմավորման, իսկ ի վերջո՝ բոլոր ժողովրդական կազմավորումների, աշխարհում ժողովրդական հոգիների ու ճակատագրերի բաշխվածության՝ գիտության մեջ դեռեւս աղոտ նշագծված համակարգում այդ բոլոր նախասկզբների համադրման լիակատարությամբ: Այսպես, Հայերը կարող են պայմանականորեն դիտվել որպես համապատասխան ժողովրդական հոգու բնութենական-ծագումնաբանական ենթաշերտ, Հայքը՝ մետաֆիզիկական հիմք, ամեն մի անհատ Հայ՝ այդ երկունը ժողովրդական հոգում միավորող կոնկրետ գոյածեւ, որով անմիջականորեն կերտվում է Հայությունը՝ իբրեւ այդ բոլոր բաղադրատարրերի՝ գերագույն միասնականությամբ օժտված գոյացություն: Ժողովրդի հոգում բյուրեղանում է նրա բնավորությունը (նրան բնորոշի միագումարը), մյուս ժողովուրդների շարքում նրա անկրկնելի կերպարանքն ու վերջինիս հարաբերակից անօտարելի պատգամը: Բնավորությունը յուրակերպորեն բեկում է ռասայական-մարդաբանական սինկրետ հողից աճած ժողովրդական խառնվածքը կամ կայուն էթոսը՝ ինքն էլ յուրակերպորեն բեկվելով համաժողովրդական հոգին առկայացնող ամեն մի առանձին հոգու անցողիկ տրամադրվածությամբ, նրա կենսական վիճակների, այսպես ասած, անհատական էթոսով: Բնավորությունը բնորոշվում է թե՛ կայունությամբ եւ թե՛ միաժամանակ, փոփոխականությամբ (ներքին ընդհարումներից եւ արտաքին խառնուրդից ու խաչավորումներից ունեցած կախվածությամբ, ինչի հետեւանքն է մի կողմից՝ ժողովրդի հարատեւումը, իսկ մյուս կողմից՝ նրա հարմարվելիությունը): Բնավորության կամ փսյուքեայի վերա-

ցումը ժողովրդի մահն է անգամ այն դեպքում, երբ նրա սկզբունքը պահպանվում է համաշխարհային մշակույթի մթնոլորտում (սա է բոլոր հայտնի, ինչպես նաև անհետ կորած քաղաքակրթությունների ձևատափը, քանի որ սկզբունքներն ինքնին անկործանելի են), իսկ նրա ֆիզիկական մարմինը՝ շարունակում է քարշ գալ սերունդների ծագումնաբանական շարանում (հմմտ. հին եգիպտացիներին եւ նրանց կենսաբանական շարունակությունը կազմող ղպտիներին):

Ժողովրդի մետաֆիզիկական սկզբունքի հարաբերությամբ նրա ֆիզիկական հիմնանյութի (ասենք, ըստ «Տայքի» սկզբունքի՝ հայերի) մշակումով կամ, նույնն է, մշակությամբ է որոշարկվում նրա անհատականությունը (ասենք՝ Տայք), որը հանգամանքների բարենպաստ զուգակցման դեպքում ընդունակ է բարձրանալ ոգու համընդհանրության ամենապարփակ, ուստի՝ գերկոնկրետ ոլորտը: Դա թերեւս վիճակվել է միայն այն ժողովուրդներին, որոնց կյանքն այս կամ այն պատճառով միաժամանակ նույնական է եղել համաշխարհային ոգու կյանքին (որի համար մեր մշակույթն ասես մի տեսակ մշտական փորձադաշտ լինի (տե՛ս առաջին հավելված)): Նման վերելքի այլընտրանքը (չհաշված հնարավոր ֆիզիկական բնաջնջումը) մշակույթի վայրէջքն է մինչ քաղաքակրթության աստիճան (տվյալ դեպքում, այդ բառի՝ Օ. Շպենգլերին պատկանող իմաստավորմամբ՝ որպես մշակույթի բովանդակազրկում, ձեւայնացում, բարոյական անկում). մի սովորական իրավիճակ, երբ գերիշխում է բնութենականից ու հոգեկանից կտրված, ոգեղեն լիցքավորումը կորցրած բանականությունը, այն է՝ գերվերացական=մեռյալ դատողականը (դատողայնությունը):

* *
*

Ժողովրդական հոգու բնավորությունը (բնույթը) պատկանում է նրա ներակա կերպարանքի եւ ներքին կյանքի ոլորտին եւ ներկայացնում է բնութենական փուլի բնական շարունակությունն ու վերածեւավորումը (վերագեշտաւտավորումը) «մարդկային բնության» տեսքով: Հոգեբանությունը մարդկությանը եւ նրան ներկայացնող ժողովուրդներին չի անջատում բնութենական փուլից, այլ հանդես է գալիս որպես բնության մի ուրույն տեսակ՝ բանականությամբ միջնորդավորված կենսաբանություն: Այսպես, հայ ժողովուրդը հայերի տրամադրած կենսաբանական հում նյութի մշակումն է՝ ըստ նրանց վերբնութենական-հայքյան վերջնային սկզբունքի, որն իր հերթին այդ նյութի արտապատկերումն է ապագայում (անկախ այն բանից, կիրականանա՞, արդյոք, աշխարհում եւ կամ ի՞նչ չափով կիրականանա այդ իդեալական արտապատկերումը), ավելին՝ նրա արտանետումն է անսասան իդեալական կերպարների («էլդոսների») արքայություն:

Իրականում մշակույթի ծաղկման փուլին, իբրեւ կանոն, հաջորդում է ոչ թե վերբնութենական, այլ քաղաքակրթության՝ ոչ բնութենական, երբեմն հակաբնութենականին հարող փուլը: Զաղաքակրթության օրոք կենդանի ոգու արվեստը (այդ թվում, ապրելու արվեստը) նենգափոխվում է դատողայնությամբ կամայական մտակառույցներ կանգնեցնելու եւ այդպես կոչված «նյութական քաղաքակրթության» արգասիքի ձեռով դրանք իրացնելու արհեստի: Մեզ այստեղ հետաքրքրող առումով քաղաքակրթությունը (Շպենգլերի տեսության ոգուն համապատասխան) զուտ ուրբանիստական բնույթ ունեցող երեսույթ է, մի ժամանակաշրջան, երբ մյուս արժեքների համեմատ գերակշռում են քաղաքական արժեքները: Եթե, հետեւելով Արիստոտելին, մարդուն սահմանենք որպես ձոռն պոլիտիկոն, բառացիորեն՝ «քաղաքային կենդանի», ապա պետք կլինի ձշտել, որ բնութենական-«գեղջկական» փուլում այդ երկու պահերից գերիշխողը ձոռնն է, քաղաքակրթության՝ մեծ

քաղաքների փուլում՝ պոլիտիկոնը, մինչդեռ մշակույթի՝ փոքր քաղաքների միջանկյալ աստիճանին այդ պահերը գտնվում են շարժուն հավասարակշռության վիճակում: Մշակույթից մերկ քաղաքակրթությանն անցնելուն պես ժողովրդի օրգանական-որակական ամբողջականությունը պարզեցվում-վերածվում է ազգի՝ քանակապես տրոհելի եւ վերամիավորելի բազմակիության: Եվ եթե ժողովուրդը ներառվում է մարդկության մեջ եւ ներազդում է նրան ոգեղինաբար՝ անկրկնելի եւ, իր ողջ ներխտացածությամբ հանդերձ, դատողայնության համար անորսալի հոգեկան երանգով, ապա ազգը կլանում է իր ներկայացուցիչների ուժը քաղաքական, տնտեսական, առեւտրական եւ այլ ծավալումներում (որոնցից խույս տվողները կործանվում են մրցության ընթացքում ճիշտ այնպես, ինչպես կկործանվեինք մենք, եթե փորձեինք խուսանավել, բնականաբար, ոչ այնքան Ադրբեջանի, որքան այսպես կոչված մեծ, կգերադասելի ասել՝ տարածուն պետությունների՝ մեզ փաթաթած պատերազմից)՝ առավելագույնս անհատականացված մշակույթը փոխարինելով վերջինիս ծայրագույն ապամահատականացմամբ դրսետրվող «զանգվածային մշակույթով»: Եթե ժողովրդին բնորոշ է ներքին ազատության ձգտումը, ապա քաղաքակրթական ազգին (դարձյալ՝ քաղաքակրթության շպենգլերյան ըմբռնմամբ)՝ արտաքին անկախության ձգտումը: Ուստի ժողովրդին ներկայացնող, ասես ներսից դուրս ապրող անհատի համար ազգայինը (իսկ էլ ավելի խոր մակարդակում՝ մարդկայինը) նրա սեփական հիմնագոյացությունն է (սուբստանցիան), բուն իսկ հոգու հյուսվածքը, մինչդեռ քաղաքակրթությամբ դիմագրկված, դրսից ներս, ուրիշինով եւ հանրայինով, գովազդով ու նորաձեւությամբ ապրող, ըստ էության՝ կոսմոպոլիտ-տիեզերաքաղաքացի անձի համար ազգայինը (առավել եւս՝ բուն, ոչ ձեւական մարդկայինը) ընդամենը դիպվածային գոյ է կամ մակագոյացություն՝ ակցիդենցիա: Դիմելով Բեկոնի կիրառած հայտնի պատկերներին՝

կարելի է ասել, որ մշակույթից դեպի քաղաքակրթություն անցնելիս՝ անձավի եւ սեռի կուտքերն իրենց տեղը զիջում են թատերական ու շուկայական կուտքերին՝ հացին ու տեսարաններին (այսպիսով, մշակույթի տվյալ ըմբռնումը մոտ է հունական աշխարհի, որպես թանձրացական չքնաղ անհատականության ծաղկման շրջանի, իսկ քաղաքակրթության ըմբռնումը՝ հռոմեական աշխարհի, որպես վերացական-անդեմ, ըստ էության, պայմանական-նշանային «իրավաբանական անձի» բարգավաճման շրջանի հեգեյան մեկնաբանությանը): Չկեղծված ինքնատիպության բացակայության, մարդու կատարյալ անյուրակերպության պարագայում թափուր մնացած տեղն անխոսափելիորեն գրավում է ինքնատիպության՝ որքան միապաղաղ-տաղտկալի, այնքան էլ հավակնոտ ու պնդերես (թեեւ հաճախ դժվարությամբ զանազանելի) նենգախաղը, այնպես որ շատ դժվար է միմյանցից ներքնորեն տարբերել այդ կատարելապես փոխփոխարկելի մայրաքաղաքային պճնամուկներին, ինչպես նաեւ զավառական ոճով նրանց կրկնօրինակողներին, որոնք ի վիճակի են հետաքրքրվել բնականոն մարդուն լոկ ձանձրույթ պատճառող բաներով: Ամեն ինչի մասին առանց այլեւայլության դատող, հոգին կենդանի ազդակներից խնամքով պահպանող, զարմանալու հատկությունն իսպառ կորցրած, շաբլոն ձեւերով խոսող եւ ոչնչով չմտածող այդ դժբախտներին լավագույն դեպքում կարելի է խղճալ, քանի որ նրանք միջավայրի այնպիսի «քաղաքակիրթ» ձնշման արդյունք են, որին կարող է դիմագրավել գուցե հանձարը միայն: Քաղաքակրթության՝ ամեն բան համահարթող հողմը նրանցից եւ նրանց ստեղծած-հայթայթած սպառողական մշակույթից արմատախիլ է անում այն ամենը, ինչը հոգեբուխ է, կայծկլտուն ու խաղուն: Այդ կերպ կաթվածահար են լինում զգացմունքն ու կամքը, բայց հատկապես՝ ինքնուրույն մտածելու կարողությունը, այն միակը, որն ի վիճակի է հոգին պահպանել սպառնացող մեքենայացումից. իսկ լեզուն, իր հերթին, միտքն արտահայ-

տելու կամ, թեկուզ, քողարկելու՝ Տալեյրանի նշած դժվարագույն գործառնության փոխարեն սկսում է կատարել մտքի բացակայությունը քողարկելու՝ Կիերկեգորի ազդարարած հեշտագույն դերը՝ ամեն մարդկային բան թաղելով իմաստագուրկ բառերի ու արտահայտությունների գերեզմանաբուրգերի տակ: Կատարյալ մշակույթի սուրբ սրբոցը՝ ազատ սավառնող ֆանտազիան, զոհաբերվում է երեակայության դժգույն փոխարկիչների ճյուղավորված տեսականուն: Բարոյական առումով, կրոնի փոխարեն կինիկությունն է դառնում քաղաքակրթության ճանկերից դուրս պրծնելու համար նվազագույն ջանք անգամ գործադրելու անընդունակ, ուստի նաեւ՝ ծայրաստիճան անպաշտպան այդ հոգիների աֆիոնը:

Այս բոլորը ոչ թե կյանքից հեռու ակադեմիական դատողություններ են, այլ վերը նկարագրված վատթարագույն եղանակով քաղաքակրթվելու՝ մեզ վաղուցվանից սպառնացող իրական վտանգի արձանագրում, ընդ որում, այդ գործընթացը մեծ մասամբ ծավալվում է առավել գավառական հունով, ինչի վաղեմի եւ ցցուն վկայություններն են մեր հեռուստատեսությամբ ձեռնարկվող ու հաղորդվող զանգվածային միջոցառումները (խաղեր եւ այլն) եւ մանկական ծրագրերի՝ անդեմ ընդօրինակման այդ գլուխգործոցները (որտեղ կապկվում են մե՛կ Մոսկվան, մե՛կ Ամերիկան, վերջինս՝ ուղղակիորեն կամ էլ՝ եւս 20-րդ դարի ամենահաղթ-ամենակործան քաղաքակրթությունից սաստիկ տուժած Եվրոպայի միջոցով), ընդ որում, այդ ամենը հաճախ ուղեկցվում է իբր թե ազգային գունավորում հաղորդելու՝ գործին էլ ավելի վնասող անզոր փորձերով, որոնք բնութագրելի են հավակնոտ թշվառականություն՝ քաղաքակրթության այս խեղված ձեւին վայել մակդիրով:

Առավել ընդհանուր ձեակերպմամբ կարելի է ասել, որ մեզ (եւ ոչ միայն մեզ) սպառնացող լուրջ վտանգներից մեկը ժողովրդական տարերքի՝ վերը նշված բաղադիրների տարանջատ իրացումն ու գոյությունն է, տարամետ ազդակներից

պառակտվող ժողովրդական հոգու մեջ դրանց փոխբացառման ու փոխվերացման միտումը: Այսպես, ցեղային-հեթանոսական սկզբունքը կրոնի աստիճանի բարձրացնող ցեղակրոն ուղղությունը կոչ է անում վերականգնել հեթանոսությունը, որպես ցեղային ոգու բնականոն գոյածեւ, եւ այդ քարոզը հիմնավոր է այն չափով, ինչ չափով ժողովրդի կյանքի բնական հիմքից կտրվելը հիրավի հավասարազոր է կենարար ուժի նախնադարյան ակունքի կորստյան, «քաղաքակրթության» վայրենության վիճակին վերադարձնող, առավել հակամարդկային տարբերակի իրականացմամբ: Սակայն նման մոտեցումը միակողմանիորեն բացարձակում է «բնական ժողովրդի» ըստ էության ռուսոյական (եւ այժմ միանգամայն ուտոպիական հանդիսացող) սկզբունքը, այս հոդվածում դիտարկվող երեւոյթների շրջանակը սահմանափակում նրանց բնութենական գոյածեւով եւ ժողովրդային բարեշրջման համապատասխան աստիճանով: Այնինչ քրիստոնեական կյանքի ու մտքի՝ ցեղակրոնի (թերեւս թյուրիմացաբար, տե՛ս ստորեւ) մերժած սկզբունքը իր բուն էությամբ (մասնավորապես՝ ազգային առումով) նվազագույն չափով կենսաբանական, անմիջականորեն՝ հոգեբանական, խորքայնորեն՝ ոգեպաշտական-սպիրիտուալիստական բնույթ ունի, այնպես որ համարժեք իրացման դեպքում այն պետք է որ շեշտարկեր «սրբությամբ ապրելու» հոգեկան-ոգեղեն արժեքները, ընդ որում, ոչ թե հոգիներն անպայմանորեն տկարացնող ինքնանպատակ կամ հավելուրդային այլասիրության տարբերակով (որի պատճառով քրիստոնեությունը մեզ համար վնասաբեր է համարվում նույն կենսաբանական ուղղության կողմից), այլ քրիստոնեությանն ավելի ներհատուկ, նրան մյուս կրոններից էապես տարբերող հոգեկոփիչ ասպետականության հաստատումով (տե՛ս 2-րդ հավելված)՝ խոչընդոտելով թե՛ նախակրոնական բնութենական-բնազդային եւ թե՛ ետկրոնական քաղաքակրթական-դատողային տարերքում հոգեկան-ոգեղենի կլանումը, բայց միաժամանակ թույլ չտալով, որ մյուս

երկուսը պարփակվեն անհատի կամ անգամ ողջ ազգի զգացմունքային կյանքի՝ մշտապես ինքն իր վրա կենտրոնացած ջրապտույտում:

Նամաժողովրդական տարերքի բնութենական հիմնավորվածության եւ քաղաքակրթական ամրագրվածության ողջ կարեւորությամբ հանդերձ՝ ոչ միայն գրաված դիրքով, այլեւ մեզ համար այժմ ունեցած նշանակությամբ առաջնային է ժողովրդի՝ դարերի ընթացքում դաժանագույն (բայց եւ սթափ մտքի համար հավանաբար ուսանելի) փորձությունների ենթարկված հոգին, որը (հավանաբար, անընդմեջ դրսից ներս խուժող, այլեւ ներսից բխող մղձավանջից պաշտպանվելու նպատակով) պահ է մտնում՝ անմատչելի դառնալու թե՛ բնութենականի բիրտությանը եւ թե՛ քաղաքակրթականի չորուցամաքությանը՝ փրկություն փնտրելով գեեհկության հասնող պարզունակ զգայականի (բնագոյայնության ինքնահաստատում) եւ արհեստականորեն խճճվող խելագանցի (դատողայնության ինքնահաստատում) միակողմանի դրսետրումների ետետում: Այդ երկուսից ավելի մեծ է թվում սին (ոչ արտաքին-կենսաբանականով, ոչ էլ ներքին մշակութայինով պատճառաբանված, զուտ ձեւային) «քաղաքակրթության» սպառնալիքը: Չէ՞ որ, եթե մտազուրկ բնագոյային մղումները, իրենց ծայրահեղ արտահայտությունների ողջ գարշելիությամբ հանդերձ, այնուամենայնիվ բնականորեն բացատրելի են որպես սեփական կենսաբանական խորքը վերասուզվելու փորձ (հմմտ. նացիականության ռասայականությունը), ապա իրականությունից հեռացած դատողայնությունը, որպես կանոն, իրականության վզին է փաթաթում օդից քաղած եւ, իբրեւ «գործողության ղեկավար սկզբունք» կիրառվելիս, երբեմն աղետալիորեն վտանգավոր դարձող կառուցապատկերներ (հմմտ. ընկերավարության գաղափարախոսապաշտությունը կամ թեկուզ կուսակցական-քաղաքական մտացածին փաստարկումներն ու ջղաձիգ փոխհերյուրանքը խորհրդարանում, որոնցով զբաղվողները գնալով ավելի ու ավելի են նմանվում բարերար

հողից զրկված ու չորանալու դատապարտված բուսականության): Չէ՞ որ սկսած հենց խորհրդարաններից՝ «քաղաքակրթություն», «ժողովրդավարություն», «իրավական պետություն» արտահայտությունները մոզական ուժ են ստացել նրանց համար, ովքեր չեն գիտակցում, թե որքան վտանգավոր կարող են դառնալ վերացական բանաձեւերը, երբ դրանք գործադրվում են կյանքում անմիջաբար-անքննադատորեն: Նվազ գրավիչ է այն ազգի նկարագիրը, որը հանձինս իր ամենամարտատենչ ներկայացուցիչների, ասես մոռացության տված դարերի վիթխարի մշակույթը (որի ներքին յուրացումն ու գործուն վերապրումը ազգի հոգեւոր կրթության միակ հնարավոր եղանակն է), մի կողմ թողած իր ազգի յուրակերպ էթոսը, բնավորությունն ու հոգեկան տրամադրվածությունը՝ դրանց բոլորի այլազան երանգավորումներով, փորձում է ուստյուն կատարել դեպի քաղաքակրթություն՝ անմիջականորեն ազդակվելով կենսաբանական-ցեղային ոլորտից: Մի կողմ է թողնվում այն հիմնականը, ինչը կարող էր պահպանել սեփական մշակույթի նկատմամբ այդ «կարծրախոսային» դիրքորոշումից, այն է՝ ժողովրդի ինքնությունը, ամեն մի ժողովրդական (սրահետ միասին՝ նաեւ անհատական) հոգու անփոխարինելի ու անփոխանցելի «այսությունը» (որը հեշտությամբ նենգափոխվում է իբր ազգային, իրենց պարզունակությամբ կամ գեեհկությամբ իսկ ենթագիտակցության շերտում առավել ազդեցիկ, պատահականորեն ընտրվող կարգախոսներով): Թերեւս դա բավական հին միտում է, որն սկիզբ է առել այն ժամանակներից, երբ 20-ական թվականներին խորտակվում էր ազգային ոգեղեն ժառանգությունը, ընդ որում, մեզանում ոչ պակաս ջանասիրությամբ, քան միության որեւէ այլ տեղում:

Խնդիրն այն չէ, որ ազգայինն ազգի մեջ ներընդերվի արտաքուստ (նման դեպքում այն կլիներ անարյուն-զծակառուցային, տաղտուկ, այլեւ մտածնական մի բան), այլ այն, որ, պարզապես, կոնկրետ կերպով սահմանվեն ազգը ներկայացնող

ամեն մեկի անհատականության բացահայտմանն ու զարգացմանը նպաստող առանձնահատուկ պայմանները (ինչը դեռևս չձեռնարկված անհատակենտրոն մանկավարժության գործն է), քանզի սկզբունքորեն բացառված է, որ դա չլինի նաև հայ անհատականություն, եթե միայն կենդանի մարդ է, այլ ոչ թե անկյանք քաղաքակրթական ապարատ եւ կամ տարրական բնագոյների կծիկ, անգամ եթե փորձում է ազգայնորեն կողմնորոշված քարոզչությամբ ուրիշներին, գուցե նաև ինքն իրենից սքողել իր նյութական-կենսաբանական (միակողմանիորեն ցեղային) եւ կամ ձեռակա-դատողաբանական, միակողմանիորեն քաղաքակրթային շեղվածությունը (ի վերջո, բնագոյայինն ու դատողայինը, համընկնելով նախահիմքում եւ նույնական լինելով բոլորի համար, կարող են հեշտությամբ անցնել մեկը մյուսին՝ առանց հոգեկանի թե՛ անհատականացնող եւ թե՛ ազգայնացնող միջնորդավորման, ինչը, սակայն, հնարավոր չէ համարել բնականոն երեւոյթ):

Նման պարագայում կատարվող ամենատարբերակաւ սխալը մշակույթի եւ քաղաքակրթության շփոթումն է: Ի տարբերություն էապես գործապաշտական եւ առհասարակ «արտադիր» (օտարված ու օտարող) քաղաքակրթության՝ մշակույթի՝ ինքնին արժեքաբանական ոլորտը չի վերածվում ընթերցված գրքերի, ունկնդրված համերգների, դիտված կտավների կամ թեկուզ ուսումնասիրված կրոնական ու փիլիսոփայական համակարգերի, այլ ամենից՝ առաջ հոգու հակվածություն ու գործունեություն է: Իրապես, ներքուստ «իմանալ» սեփական (եւ համաշխարհային) մշակույթը հնարավոր է միայն նրան ստեղծագործաբար վերաբերվելու չափով (տես 3-րդ հավելված): Ընթերցված գիրքը եւ այլն իսկապես արժեքավոր են միայն մարդու ներաշխարհի իրադարձությունն դառնալու պայմանով, իբրեւ արտաքուստ յուրացվող այնպիսի բովանդակություն, որը միախառնվում է ներսից բխող ըմբռնումի ու հույզի հոսքին (մի այնպիսի բան, առանց որի ներքին կյանքը չի կարող կայացած համարվել եւ

առհասարակ հարատեւել), բայց ոչ երբեք՝ որպես արտաքին իրազեկությունն ընդլայնելու միջոց, ինչը զուտ «քաղաքակրթական» մոտեցում կլիներ (մեր կյանքն ինքնին արդեն մեզ ստիպում է հոգիներս ծանրաբեռնել բազում ավելորդաբանություններով, ուստի հարկ չկա այդ անել նաև միտումնաբար): Միայն այդ կերպ մարդ կարող է ոչ միայն ընդգրկել գիտելիքի տարբեր մարզերը, այլեւ ինքը դառնալ մի տեսակ կենդանի գիտելիք, այն է՝ մշակույթ՝ մտքի, նաև գործի, զգացմունքի ու խոսքի, ողջ կենսական պլաստիկայի հղկվածություն, ընդհուպ մինչեւ «ներսից դուրս» եւ «վարից վեր» աշխատելու, շնչելու, սիրելու ընդունակության ու արվեստի ձեռավորումն ու ծավալումը, իսկ հաղորդակցման ոլորտում՝ մինչեւ չկեղծված քաղաքավարության՝ ծաղկուն մշակույթի ճյուղին քաղաքակրթության այդ պտուղի հասունացումը:

Այսպիսով, վտանգալի է ոչ թե քաղաքակրթությունն ինքնին, այլ կյանքում նրա միակողմանի արմատավորումը, երբ, ասենք, ազգային երեւոյթների շրջանակից ձգնվում-արտամղվում են կենսաբանական-ցեղայինն ու հոգեբանական-ժողովրդայինը, ինչի հետեւանքով նրանք, սակայն, ոչ թե վերանում են, այլ վերադրսետրվում առավել այլասերված կամ հակազեղագիտական ձեւերով՝ վայրի բնագոյնությամբ, քաղթենիական սըրտաճմլիկ զգացմունքայնությամբ: Նույնը կարելի է ասել նաև ազգային մյուս շերտերի միակողմանի ուռձացման մասին: Այսպես, եթե ժողովրդաքաղաքակրթական «խելքի» ժողովրդի հավաքական մարմինն ու հոգին (կամ, նույնն է, անհատական մարմինների ու հոգիների հանրագումարը, նրանց բազմապիսի ու բազմաշերտ զգայությունները, շահերը, շնորհները եւ այլն) շրջանցող ինքնասպառ սահմանագծումը հանգեցնում է ժողովրդայինի-ազգայինի լուծմանը տիեզերաքաղաքացիականում, ապա նեղ առումով ժողովրդայինից կառչելու փորձերն սպառվում են ազգի ինքնասահմանափակման ու նրա կենսաձեւերի կարծրացման «քարանձավային հոգեբանության» մանրաշխար-

հով (տե՛ս 4-րդ հավելված):

Վերածնալվորելով Կանտի հայտնի խոսքերը պատկերային էի եւ հասկացականի փոխհարաբերության մասին՝ նշենք հետեւյալը. քաղաքակրթությունից զուրկ մշակույթը, համամարդկայինից (նաեւ՝ միջժողովրդայինից) զուրկ ժողովրդականը կույր են, իսկ առաջիններից զուրկ վերջինները՝ դատարկ: Ժողովրդականն ու ազգայինը առանց ցեղային (եւ ռասայական) բնութեական հողի հիմնագուրկ են, իսկ այդ հողն առանց ժողովրդականի ու ազգայինի անպտուղ է: Բայց այն դեպքում, երբ, ասենք, քաղաքակրթությունը հանդես է գալիս որպես ժողովրդական կյանքի հիմնանյութը հղկող ձեւ, ուստի դադարում է սոսկ քաղաքակրթություն լինելուց, մշակույթին գրկախառնված բարձրանում է այն աստիճանին, ուր ժողովուրդը ի հայտ է բերում իրեն ներդրյալ մեծաֆիզիկական սկզբունքը (ինչպես, ասենք, չինացիներն, ըստ Նեգելի, արտաքին քանակական որոշակիության, հնդիկները, մասնավորապես բուդհայականությունը՝ անգոյության, հույները՝ ներքին որոշակիության կամ անհատականության, հռոմեացիներն էլ անձի սկզբունքի կրողներն են): Մեզ համար վճռորոշ նշանակություն ունեցող խնդիրներից է մեր ուրույն սկզբունքի սահմանումը՝ մեր իսկ կյանքի եւ ձակատագրի հարաբերակցությամբ. նախնականորեն սահմանենք այն իբրեւ վերացական անհատապաշտության սկզբունք, որը թերեւս մեր ազգային որոշարկիւն է եղել՝ սկսած առնվազն քրիստոնեականացման ժամանակից (տե՛ս նաեւ 5-րդ հավելված):

Քաղաքակրթությունն ինքնին արդեն կրում է արժեքային պահեր՝ կյանքի այնպիսի արտաքին պայմանների ստեղծում, որոնց շնորհիվ այն դադարում է անասնական կյանք լինելուց, իրավական կենսաձեւի սկզբունքների ու սովորույթների ներարկում եւ այլն (թեեւ մի այլ առումով նույն քաղաքակրթությունը, անհատների նախաձեռնությունը խեղդող գիտատեխնիկական եւ նրանց սոցիալականորեն համահարթող հասարակաբանա-

կան ծավալապաշտությամբ, մարդկությանը հասցրել է ֆիզիկական ոչնչացման եւ բարոյական քայքայման շեմին, ստիպել նրան մոռացության մատնել բնական կյանքի բաղձալի պարզությունը, մշակույթի միջոցով մարդու արտաքին ու ներքին բնության իմաստասիրական ըմբռնման ու գեղագիտական կերպավորման խորությունն ու նրբությունը): Քաղաքակրթության՝ ժողովրդական տարերքի շահերից բխեցվող տարբերակը (որը մինչեւ այժմ իրականացվել է միայն առանձին երկրների կամ նրանց առանձին մասերի պատմության որոշ փուլերում, հատկապես Եվրոպայում) դրանով իսկ ոգեղինանում ու դատողաբանականից վերածում է բուն բանականի՝ բանականության լույսի, որը հիրավի ի վիճակի է ի հայտ բերել եւ ներխուտացնել ժողովրդական աշխարհի բազմերանգությունը՝ իր հերթին ներթափանցվելով այդ աշխարհի ջերմությամբ:

Տիեզերաքաղաքացիության խաբուսիկ գրավչությանը հնարավոր է դիմագրավել միայն այն դեպքում, եթե համամարդկայինը սահմանագծելիս ելակետ ընդունվի ոչ թե մարդու էության վերացական ըմբռնումը (որը հատուկ է, ասենք, 18-րդ դարի ֆրանսիական նյութապաշտներին), այլ սեփական մշակույթի, տարբեր մշակույթների ու մշակութատիպերի հիմնանյութը (հնարավորին չափ լայն ու խոր ընդգրկմամբ), ինչը մարդկային ընդհանուր հասկացությունը կհագեցնի կոնկրետ բովանդակությամբ, ուստի այն կվերածի հիրավի համընդհանուր հասկացության ու կենդանի իդեալի: Իսկ դա անհրաժեշտ է հաջորդ քայլը կատարելու՝ այդ բարձունքից վերստին «ցած»՝ ժողովրդահոգեբանական աստիճանին վերադառնալու համար, ինչով համամարդկայինի նվաճած բովանդակային հագեցածությունը կլրացվի (եւ կավարտվի) ժողովրդականի ձեռք բերած տեսունակությամբ, ժողովրդականն էլ, իր հերթին, կհաստատվի որպես համամարդկայինի ժողովրդային ներկապնակն ամբողջացնող անհրաժեշտ երանգներից մեկը: Այդ ընթացակարգը (երբ մարդն, ասես, այնքան է ձանապարհորդում օտար

երկրներում, որ նույնիսկ առաջին անգամ այցելած վայրերը նրան սկսում են ծանոթ թվալ, այսինքն՝ բազմակերպ աշխարհը սկսում է ընկալվել միակերպ համամարդկային համընդհանուրի բեկմամբ) հավասարազոր է ժողովրդական գիտակցության վերափոխմանը ազգային ինքնագիտակցության, որին ասես հաջողվել է ինքն իրեն տեսնել այլ ժողովրդական հոգիների եւ համաշխարհային համաժողովրդական ոգու հայելում: Եվ հակառակը, տարբեր ժողովրդային մշակույթների եւ դրանց միջուկը ներկայացնող համաշխարհային մշակույթի միջնորդավորմամբ ինքնագիտակցության չհասած ժողովուրդը, բնականաբար, չի գիտակցում ո՛չ համընդհանուր մշակույթում իր գրաված տեղը, ո՛չ էլ, հետեւաբար, ինքն իրեն. դա դեռեւս լիակատար իմաստով ժողովուրդ չէ եւ կամ թերի ժողովուրդ է, որի ինքնությունը դուրս չի գալիս նախասկզբնական ցեղայնության սահմաններից: Ժողովրդական ու մարդկային պահերի գերագույն փոխմիջնորդավորումը տվյալ բնագավառում բուն կոնկրետության նվաճումն է, համակարգված եւ, միաժամանակ, շարժուն մի հարստություն, որտեղից էլ բխում է ամեն մարդու, որպես ժողովրդի անդամի դաստիարակման փուլերի հանձնարարելի հաջորդականությունը, այն է՝ ա. խորացում սեփական մշակույթի մեջ՝ այլ մշակույթներում կլանվելու վտանգը բացառող ինքնակենտրոնացմամբ (կլանվելու վախը հատուկ է մեզ, որպես ի բնե «ներդարձ»-ինքնամփոփ ժողովրդի, թեեւ հազարամյակների ընթացքում մենք ուրիշներից շատ ենք կուտակել ժողովուրդների ու մշակույթների հետ ճկուն շփման մեջ գտնվելու, ուստի եւ նվաճողների հափշտակիչ նկրտումներին դիմագրավելու նշանակալի փորձ), բ. ազատ նավարկություն օտար մշակութային ծովերով այնպես, ասես սեփական ծովեր լինեն (ինչով ձեռք է բերվում նաեւ սեփականը կողքից, օտարի աչքով ընկալելու խիստ կարեւոր հատկությունը), գ. անցում ներազգայինից համամարդկային տարերք (ամեն երիտասարդի կյանքում բնական կերպով վերապրվող «տիեզերաքաղաքացի-

ության» փուլ)*, դ. վերադարձ սեփական ժողովրդականին՝ համամարդկայինի հետ փոխմիջնորդավորված տարբերակով: Բնականաբար, խոսքն այստեղ փուլերի՝ ավելի շատ տրամաբանական, քան փաստական հաջորդականության մասին է: Նամամարդկային եւ ժողովրդական ուրուտների միջեւ գտնվում է գիտության մեջ գործնականում չհետազոտված մի բնագավառ, որի ուսումնասիրությունը կարելի է կոչել ժողովուրդների համակարգաբանություն, եւ որի նպատակներից մեկը պետք է որ լինի ժողովուրդների նկարագրությունն ու խմբավորումը ըստ նրանց հիմնակազմ կամ գերիշխող մշակութափոփոխական հատկանիշի, այդ թվում նաեւ՝ կապված նրանց նախասկզբնական տարածական բաշխման հետ, օրինակ՝ ըստ զգայություն-կամք, զգացմունք-երեւակայություն, դատողականություն-բանականություն գերակայող հատկանիշների տարածական բաշխման:

Այս կողմից ինքներս մեզ ճանաչելու դեպքում կարող ենք հարց տալ մեզ, թե արդյոք ի՞նչ ենք ուզում դառնալ՝ մեկը մյուսից չտարբերվող ապազգայնացած տիեզերաքաղաքացիներ՞, ամեն մեկս մեզանում ըստ մեր անձնական նախասիրության իբրեւ ազգային իդեալ ծրագրավորվածը առաջ քշող գերազգայնացած գերազգայնամուլներ՞, թե՞ այդ հակադիր պահերը ազգային-համամարդկային ազնիվ ամբողջության մեջ միավորող, նրանում ինքնահաստատվող եւ մեզանում այն հաստատող՝ պարզապես հայ մարդիկ: Նկատենք, որ թե՛ ապազգայնացման եւ թե՛ ապամարդկայնացման (մարդկայինի ստորադասում ազգայինին) պարագայում տուժողը անհատականն է՝ մեր ազգի թե՛ ազգային եւ թե՛ մարդկային կերպարանքի այդ գլխավոր արժեքն ու հարստությունը, նրանում՝ բուն ազգային-մարդկայինը, որն առաջին դեպքում լուծվում է նեղ («դատարկ») իմաստով մարդկային (քաղաքակրթային), իսկ

*Սա թերեւս այն եզակի դեպքերից է, երբ արդարացված է «տիեզերաքաղաքացիություն» բառի վեհ ներքին իմաստավորումը:

երկրորդ դեպքում՝ նեղ («կույր») իմաստով ազգային (ցեղային) տարերթում, ավելի ճշգրիտ ասելով՝ տվյալ գործչի պատկերացմամբ ազգայինը ներկայացնող գծակառույցներում, որոնք սովորաբար հենց այդ գործչի անձնական նկարագրից վերաբերած արտապատկերումներ են, եւ միայն երրորդ տարբերակում ազգային տիպարը ներկայանում է ոչ թե աղքատիկ վերացարկյալով, այլ ողջ կենսական միասնականությամբ (համակարգայնությամբ) եւ բազմապիստությամբ (կառուցվածքայնությամբ) միաժամանակ՝ իդեալական կադապարում ընդգրկելով ազգայինը՝ վերջինիս թե՛ էպիկական ամբողջականությամբ (օր.՝ Սասունցի Դավիթ, Թումանյան, նաեւ՝ այդ ամբողջականության խոր տեսաբան ու հզոր քարոզիչ Նժդեհ), թե՛ դրամատիկական երկատվածությամբ (Փոքր Միեր, Նարեկացի), թե՛ վերջապես, առաջին տիպի բոցավառությունն ու երկրորդի նրբակերտությունը միահյուսող քնարական երկատված ամբողջականությամբ (Նահապետ Զույակ, Պետրոս Դուրյան, Պետրոս Աղամյան): Այս երեքից անհատապաշտ հոգեխառնվածքին առավել չափով համապատասխանողը, ինչ խոսք, քնարական խառնվածքն է:

Սեղմ բանաձեւմամբ, արդյունավետ, քանզի կոնկրետ եւ մեզ համար առանձնապես արդիական է թվում ժողովրդական տարերթի զարգացման այդ երեք փուլերի (կամ նրա կառուցման երեք գոյաշերտերի)՝ ժողովրդական «մարմնի» ու «խելքի» նույնպիսի «հոգով» գերագույն ամբողջի մեջ ի մի առնվող բաբախուն ներդաշն զուգորդումը: Բայց այդ համադրման իրայնացման իսկ պահին սեփական տարրերի ծանրությունից ձերբազատված ժողովրդականն ասես համբարձվում է անձնավորայնություն ձեռք բերած ոգեղեն-ժողովրդականի ոլորտը, որի մասին հնարավոր չէ պատմել սովորական գիտական բառերով, եւ ժողովուրդը դառնում է երկրի երեսին իմաստավորված կյանքով ապրող ժողովուրդ: Այդ կերպ բացորոշված հոգին ինքն իրեն ու աշխարհին հայտնվում է որպես ժողովրդի հանձարեղություն: Նրանում ի սկզբանե ներդրված, բայց

ուսկայածավալ ժամանակաշրջանների ընթացքում ճակատագրի սառցակամամբ կաշկանդված այդ երկնային շնորհը մակերես է բարձրանում փիլիսոփայական մտահայեցման, արվեստի եւ բուն կյանքի գեղագիտական ձեւակերտման, այլոց եւ (մի ավելի՝ էական ու պատվավոր խնդիր) սեփական անձի կապանքներից (սեփական հոգում եղած մակաբերյալից, անօրգանականից, անազատից) ազատագրման համար մղած պայքարի, այլեւ քչերին (եւ հազվադեպ) հաջողված կյանքի սրբության տեսքով: Այնժամ կարող է վրա հասնել մի պահ, որ չեզելը բնութագրել է որպես «այն գերագույն աստիճանը, որին բարձրանում է ազգային բնավորության նախասկզբնական հակվածությունը, այն ոգեղեն ձեւը, որին հաղնում է ազգերի մեջ բնակվող բնութենական ոգին»: Թերեւս բացի այդ վերելքին ներքնորեն պատրաստ ողջ ազգի կամ նրա՝ հոգեժայթքմամբ ընդգրկված մասի (ասենք, Մեղիչիների օրոք՝ Ֆլորենցիայի) հոգեկան վերելքի շրջանականներից նման հանձարեղությունը, բանահյուսական-դիցաբանական ժամանակներից այս կողմ, հիմնականում առանձին անհատների մենաշնորհ է եղել, քանի որ թե՛ համամարդկային, թե՛ ժողովրդաազգային (նաեւ, ինչու՞ ոչ՝ ռասայական, այլեւ մեր ազգին այդքան հոգեհարազատ ընտանեկան, նրա խառնվածքին այդքան անհարիր կուսակցական եւ այլ) արժեքների, ինչպես եւ հակարժեքների կրողը, նրանց գոյության ու ծավալման իրական ձեւը անհատն է, որն իր շնչով կենդանացնում է ժողովրդական տարերթի՝ վերացական տարանջատվածության վիճակում գտնվող շերտերը, իր հմայքով ստիպում է նրանց ճառագել ներքուստ: Բուն իմաստով ժողովրդական ու ազգային են հենց այն անհատները (եւ նման անհատներից բաղկացած ժողովուրդները), որոնք իրենցում եղած ժողովրդականն ընդլայնում են մինչեւ համամարդկայինը, խորացնում մինչեւ այլաժողովրդայինը, վեհացնում առ աստվածայինը, ինչը, բնականաբար, հնարավոր է միայն այն պատճառով, որ այդ փոխակերպումների ներունակությունը

արդեն իսկ պարունակվում է տվյալ անհատի, տվյալ ժողովրդի մեջ: Սակայն ասե՛նք նաեւ, որ դրանով այդ անհատները (ժողովուրդները, ռասաները եւ այլն) համամարդկայինէն, այլազգայինէն, աստվածայինէն հաղորդում են իրենց եզակի երանգը, նրանցում վերակենդանացնում նշված ներունակութիւնը: Այսպես, եթե Աստված ներունակ Նարեկացի, Բախ կամ Նոմերոս է, ապա վերջիններս էլ իրայնություն ձեռք բերած Աստված են, եւ երկրի վրա ամեն արարչական բան բուն իսկ Աստծո ապավերացականացում ու առկայացում է:

Ուստի նորից ու նորից պետք է կրկնել հետեւյալը. ապարդյուն է, իսկ մեր դեպքում կարող է կործանարար դառնալ, երբ ազգային տեսությունն ու պրակտիկան խարսխվում են ոչ թե ժողովրդի առանձին ներկայացուցիչների եւ նրանց տարատեսակների, այդ ամենի հանրագումարի ցեղաժողովրդաազգային կենդանի համադրական հիմնագոյացության, այլ կյանքից չբխող անբովանդակ, հավակնորդ եւ իրենց սուբյեկտիվությամբ իսկ պատահական ազգային կառուցապատկերների վրա, մանավանդ երբ դրանք փաթաթվում են այլոց վզին՝ հակադրվելով ուրիշների առաջարկած եւ իրականությունից սովորաբար նույնքան հեռու գտնվող պատկերացումներին: Այդպիսին է սեփական ժողովրդի նկատմամբ ցուցաբերվող պրոկրուստեսյան վերաբերմունքը, որ ելնում է «հայի» մասին կանխակալ կարծիքներից պատկերացումից՝ այն դարձնելով իրական հայերի գնահատման չափանիշ (տես նաեւ 6-րդ հավելված): Իրականում, հայ դառնալու համար հարկ չէ, որ ամեն մեկը հորինի իր սեփական իդեալական չափը, այլ բավական է, որ նա իսկապես լինի հենց ինքը՝ ինչպես որ կա, իր իսկ եւ աշխարհի հանդեպ բաց, ստեղծագործաբար ապրող մի էակ: Չայությունը տարադէմ ու մեր բնության նման բազմակերպ է, ինչպես իրենք՝ հայերն ու նրանց տարատեսակները, եւ միաժամանակ միասնական՝ եւս նրանց նման, իսկ դա նշանակում է՝ ոչ այնքան էլ միասնական: Ամեն մի «լավ»

կամ «վատ» հայ, որպես հենց հայ, իսկ դա նշանակում է՝ որպես մարդ, ինքնին որոշակի արժեք է, ինչն էլ իրական արժեքայնություն է տալիս հայությանը (կամ այս նույն առումով դիտվող որեւէ այլ ազգային տարերքի): Ուստի թող ոչ ոք չհանդգնի իր անկենդան չափանիշներով որոշել մեկ ուրիշի հայ լինելը կամ չլինելը եւ կամ լինելու չափը: Թերեւս անգամ «վատ» (ավազակ, մատնիչ, կուսակցական խառնակիչ եւ այլն) հային հնարավոր է վերաբերվել որպես ընտանիքի մուտրյալ անդամի, եւս Աստծո արարածի, որի բիբերի հատակին ծալված է հավերժության ու անմահության այն նույն սարսազազու անդունդը, ինչ որեւէ այլ մահկանացուի աչքերում: Իսկ սերը նրա նկատմամբ հատկապես կարետոր է, քանզի դա կործանման ուղում գտնվող նման հոգու միակ փրկելաձեւն է, ինչը բնականաբար չի բացառում նրա նկատմամբ խստագույն արդարացի պատժամիջոցների հարկադրյալ կիրառումը՝ ի վերափոխումն անձի եւ ի շահ մնացյալի, ի մաքրումն ընդհանուր ոգեղեն մթնոլորտի:

Ռաստիարակման ու ղեկավարման ճշմարիտ ու արդյունավետ, հեռանկարային ուղին այն է, երբ անհատին (եւ հատկապես հայատիպ անհատին) չեն ձնշում ո՛չ հասարակական, ո՛չ քաղաքական, ո՛չ կրոնական, ո՛չ գաղափարախոսական, ո՛չ սեռային, ո՛չ էլ որեւէ այլ առումով, այլ ընդհակառակը. ձգտում են ստեղծել այնպիսի մթնոլորտ եւ այնպիսի միջավայր, որտեղ հնարավոր չէ ապրել ոչ արարչական, ոչ ոգեղեն եղանակով (դրա համար, նախեսառաջ, փորձելով սահմանել հայության ու մարդկության կյանքի ու մշակույթի մեջ տվյալ անձին նախատեսված այն տեղը, ուր թե՛ նա ինքը եւ թե՛ ուրիշներն իսկապես գոհ կլինեն իրենից՝ որպես այսինչ երգչուհուց կամ այսինչ տրակտորավարից եւ այլն)՝ այս կերպ հնարավորություն տալով նրան սեփական մտերմիկ կտրվածքով-հնչեցնանգով-գունեցնանգով արտահայտելու հայությունն ամբողջությամբ, իսկ հայության միջոցով՝ մարդկությունն ամբողջությամբ: Ժողովրդավարությունն ամեն մեկին

տալիս է առնվազն ինքն իրեն այն աստիճանի հարգելու հնարավորություն, որ նա հարգի՝ եթե ոչ իրեն, ապա գոնե (ինչն ավելի դժվար ու եական է) ուրիշին: Այնինչ ուրիշի հաշվին կատարվող ինքնահաստատումը նաև սեփական անձի նկատմամբ անարգալից (թե առերեսությո՝ պաշտամունքային՝ վերաբերմունքի նշան է՝ բարոյական թուլամտության տարատեսակ է ուրիշի ինքնավարության նկատմամբ ամենեւին էլ ոչ ժողովրդավարական բնույթ ունեցող բռնություն: Դա բնազդային անզուսպ ու կատաղի մղումներից բխող քաղաքական կոնցեպցիա է, որը հաղթահարելի է միայն այն պայմանով, որ ազգի կանոնավոր մարդիկ միացյալ հանդես գան իբրև ազգի նվիրյալ հոգեբույժներ:

Մենք դռեւս գտնվում ենք ընդհանուր կենտրոնախույս եւ մասնավոր կենտրոնաձիգ (եսասիրական) շահերի զուգակցման այնպիսի վիճակում, որ Կա՝ ռը վերագրում էր իր ժամանակաշրջանի Լեհաստանին: Վ՝ ս նա բնութագրում է որպես «տերերի երկիր... որտեղ ամեն քաղաքացի ցանկանում է լինել տեր, բայց այդ տերերից ոչ մեկը... չի ցանկանում լինել հպատակ»: Առայժմ այն տպավորությունն է ստեղծվում, որ շատերը համաձայն կլինեին ազատ ու անկախ Վայաստան ունենալուն՝ նրա նախագահը լինելու նվազագույն պայմանով՝ սեփական անձնավորությունը դիտելով որպես հայի խառնվածքի, մտածելակերպի ու գործելակերպի չափանիշ առհասարակ (սեփական անձի նկատմամբ նարկիսոսյան վերաբերմունքի փայլուն նմուշ): Կան պատմական տեղեկություններ, որ շյախտիչները, այնուամենայնիվ, այնքան շրջահայաց գտնվեցին, որ մահացու ընդհարումներից ազգը փրկելու համար լեհական գահին սկսեցին նստեցնել այլազգիների, մի բան, որին մենք, բնականաբար, կանխակալ ձեռով համաձայն չենք՝ մերժելով անգամ արժանավոր բարեկամի հպատակ լինելու գաղափարը, թեև գործնականում որքան հաճախ ենք ստիպված եղել դառնալ անարժան թշնամու ստրուկ: Առայժմ այս ամենը թերեւս

անհմաստ խոսակցություն է, քանի որ պետք է կամ խելագար, կամ էլ պատասխանատվության զգացումի գերագույն չափով օժտված մեկը լինել՝ արտաքուստ եւ, հատկապես, ներքուստ (կուսակցականորեն) անխնա պաշակտվող երկրի ղեկավարությունը ստանձնելու (ըստ էության, նրա փրկությանը նվիրվելու) համար:

Չկա՝ Վայաստան առանց բոլոր հայերի, բայց չկա՝ նաև մարդկություն առանց բոլոր «մեծ» ու «փոքր» ազգությունների, ուստի եթե ոչ տրամաբանական, ապա գոնե փաստական առումով ազատ Վայքի գոյության նախապայմանը (որպես մարմին եւ համայնք) ազատ հայերն են, այլ ոչ հակառակը, իսկ վերջիններիս գոյության նախապայմանը ազատ Վայն է՝ որպես անհատականություն, որպես հոգի ու կյանք՝ ժողովրդների բացարձակ Ոգու «հայություն» ճյուղին մի օր լիակատար կերպով բացվելիք ծաղիկ (որի փթթումը, չհաշված ժողովրդային տարերքի նախնադարյան պոռթկումները, առայժմ նշմարելի է եղել միայն առանձին վեհակերտ անձնավորությունների կյանքում եւ գործում). հայ, որն աշխարհը իրենով հարստացնում է իբրև ոչ թե արտաքուստ, այլ ներքուստ ճառագայթող կրոն:

Այս նկատառումները հատկապես նշանակալի են մեր ժողովրդի համար, որի «նախատիպային» բնութագիրը, ամենայն հավանականությամբ, ներխտացման այն աստիճանի հասնող անհատապաշտությունն է, երբ սկսում է թվալ, թե Աստված հայությունը բաղադրել է այն բոլոր հոգիների միագումարից, որոնք չեն ցանկացել ծնվել որեւէ այլ ժողովրդի մեջ: Մեծագույն պարսպոքսն այն է, որ հայության համընդհանուր սկզբունքը հենց սկզբունքի համընդհանրության բացասումն է եւ բազմաթիվ մասնավոր, անգամ անհատական սկզբունքների հաստատումը:

Թե՛ անհատին եւ թե՛ ժողովրդին՝ ազատ դինամիկ հավասարակշռության կամ կոնկրետության վիճակին բերելու ուղին

Նրա միակողմանիության հաղթահարումն է՝ իրեն իսկ հակադիր սկզբունքի ընդգրկման ու գործադրման միջոցով: Պատգամակիր կլինի Հայաստանի այն ղեկավարությունը, որին հաջողվի, պահպանելով ազգի հիմնական արժանիքը՝ բազմաթիվ ինքնատիպ անհատականությունների առկայությունը, մեր ինքնապարփակ կերտվածքն ու պահվածքը, այն ինչ-որ կերպ համալրել ու հավասարակշռել աշխարհի հանդեպ ձեռք բերած քաջ արձակությամբ, ներդաշնակորեն միակցել կենտրոնախույս եւ կենտրոնաձիգ մղումները եւ ժողովրդական տարերքի՝ հատկապես վերջին դարերի ընթացքում ներփակ-անշարժ դարձած «գերհամակարգայնությունը» այդ կերպ վերածել շարժուն «բաց համակարգայնության»:

մի խոսքով, դա պիտի լինի մի ղեկավարություն, որը, գիտակցության հենց այդ փոխվանդ կենտրոնները ստեղծարար գործի մղելով, կարողանա վերածել դրանք փոխձգող կենտրոնների, ընդ որում այնպես, որ անհատը չկլանվի ո՛չ բնութենական նույնությամբ (հարավից եկող միտում), ո՛չ էլ համայնական նույնությամբ (հյուսիսից եկող միտում), այլ իր իսկ բովանդակությունը աշխարհում ծավալելով՝ իրագործի կոնկրետ ազատության ոչ նույնական նույնականությունը կամ, նույնն է, հակադրամիասնությունը:

* *
*

Մենք մեկ անգամ արդեն եղել ենք ժողովրդական կյանքի օրգանականացման-վերակենդանացման-կոնկրետացման, նրանում ներլարուն ներդաշնակության համընդգրկուն իրականացման վկաներ: Դա տեղի է ունեցել 88-ին Ազատության Հրապարակում, ընդ որում, ոչ միայն եւ ոչ այնքան հանդիսավոր միտինգային երեկոներին, որքան ցերեկային աշխուժության, դրա անսպառ ու հաճոյահրաշ հանկարծակրտումների պահերին: Հրապարկն ասես կենդանի լիներ: Դա ժողովրդի, որպես ամբողջական

էակի, նրա կյանքի բոլոր շերտավորումներում ու ձեւերում վրա հասած աստեղային ժամն էր, քանի որ հենց այդ օրերին նա ազատ ու անկախ էր ըստ էության՝ ներքնորեն, ինչի պակասը մենք զգում ենք այս պահին դեռես անասող գիշերվա զուտ արտաքին ազատության ու անկախության պայմաններում: Այնուամենայնիվ, թեկուզ եմթագիտակցության խորքում, բայց պահպանվել է այն բանի իմացությունը, թե մենք ինչի՛ ենք եղել ընդունակ ու արժանի, ուստի եւ՝ կլինենք երբեւիցե:

Որքան էլ մեր հոգու մեջ խոր թափանցած լինի ինքնանպատակ անհատապաշտությունը («անհատապաշտություն անհատապաշտության համար»), որքան էլ համապարփակ թվա այն, միեւնույնն է, խորքայնորեն այն կատարելապես ունայն է՝ վերացական նախապաշարումներից գոյացած մի բեռ, որ նեղում ու կաշկանդում է մեր բուն էության դրսեւորումը արտաքին-երեւութականում: Որքան էլ շեշտարկենք մեր հիրավի ցցուն ինքնությունը եւ նրա յուրակերպությունը այլոց ինքնությանց համեմատ, միեւնույնն է, մեր խորագույն, վերջնային բնույթը, բնականաբար, նույնական է մյուսների, ողջ մարդկության, բուն իսկ Մարդու գերագույն էությանը եւ ոչ այլ ինչ է, քան Ոգի կամ Ազատություն: Իսկ մեր ինքնատիպն այն է, ինչը մենք մեզ հետ կներբերենք Ոգու արքայություն, եւ ինչը կարող է լինել միայն այդ նույն, մեզ ներակա անհատապաշտությունը, միայն թե այս անգամ ոչ թե բացասական, այլ դրական լիցքավորմամբ, վերացական ամենասպան սկզբունքից վերածված կոնկրետ, կենդանի ու ազատ՝ ստեղծագործ անհատականության: Ըմբռնելով այդ ներումակությունը եւ ողջ էությամբ ձգտելով նրա իրականացմանը՝ երզվյալ կասկածապաշտների մշտական տարակուսանքից ունայն ինքնահաստատումների շարանում մաշված մեր հոգին մինչեւ վերին սահմանը կլցվի ջերմ հավատով, որն անկասելիորեն աշխարհ կարտագեղվի որպես անկաշկանդ զոհաբերական սեր, որի բոցում, արեւի լույսից սահմեկող-չբացող ուրվականների նման, կմոխրանա ու

կտապավի անշիտակ դատողայնության, սատանայական «չարի» նույն վերացական ես-ի այդ դավանաբան փաստաբանի շեղիչ մտոստայնը: Ինքն իրեն եւ աշխարհը մշտապես վերստեղծող սիրո բովում օբյեկտի մեջ ինքն իրեն ոտով-զխով կորցրած (անհատ, ազգ եւ այլն) սուբյեկտը դրանով իսկ, առաջին անգամը լինելով, ինքն իրեն իրայնորեն կնվածի որպես ավարտվածության աստիճանի հասած կոնկրետ անհատականություն կամ անձնավորություն՝ ժողովրդի ինքնագիտակցման՝ մարդկության զարգացման տվյալ աստիճանին նվաճած բարձրագույն մակարդակի հայտանիշ. դա այլեւս հենց նման, ազատաբեկ թարրերից կայացած ժողովուրդ է կամ, դիմելով դիցաբանական պատկերի, մի ժողովուրդ, որ վերագտել է իր աստղը:

Մեզ, մեր ասես դիտմամբ ինքնաբերական մշայությամբ, պակասում է հոգու իմաստուն-լուսավոր թեթեւությունը (ոչ թեթեակշռությունը)՝ ոչ այնքան էլ լուրջ վերաբերմունքի արժանի բաների նկատմամբ. հատկապես այժմ մեզ շատ պիտանի մի հատկություն, որն աշխարհում փայլատակում է որպես գաղղիական աշխարհընկալում: Պակասում է նաեւ ամենօրյա կենսաձեւ դարձող կրոնականությունը գուցե այն պատճառով, որ միաբնակության սկզբունքը հույժ բարձր է երկնքում գետեղել նրան, ով իրականում աշխարհ եկավ՝ երկնայինը երկրայինին վերամիավորելու: Այնինչ իր անհատականությամբ սահմանված պատգամը մեր ժողովորդը կկարողանա լիովին գիտակցել ու իրագործել միայն այն պարագայում, եթե նրանում ամեն մեկը եւ ինքն ամբողջությամբ, շարունակելով ապրել այնպես, ինչպես գերագանց սովորել է ապրել դարերի ընթացքում, այն է՝ ոչ թե դրսից ներս (մակերեսորեն), այլ ներսից դուրս (ստորությամբ), սովորի նաեւ ապրել, ճիշտ է, դարձյալ իր համար, բայց ուրիշների եւ աշխարհի միջնորդավորմամբ (երբ թո բարիքը ածանցյալ ես դիտում ուրիշինից): Բանն այն է, որ չարիքը ոչ թե ինքնին

եսակենտրոնությունից է, որը նաեւ ամեն տեսակի վեհ կամային դրսեւորումների աղբյուր է, այլ եսակենտրոնացման կոպիտ, ուղղագիծ ըմբռնումից: Մեզ համար կատարյալ կլինեն այն տարբերակը, երբ մեզանից յուրաքանչյուրն իր հոգուն կերտեր Ազատության Հրապարակ՝ Փայլի ու Հավատի այդ համաձուլվածքը, եւ ստեղծագործեր այնտեղ (ոչ միայն աշխատանքի մեջ, այլեւ ողջ կյանքի՝ կենսական իրադրությունների եւ հարաբերությունների համահյուսվածքում) ներշնչումով, վարպետորեն, զվարթ:

Այդ կերպ թոթափելով այլաժին-եսակենտրոն մակաշերտը՝ ժողովրդի հոգին կվերապրեր մի անբաղդատելի թեթեւացում եւ կդառնար մի տեսակ թափանցիկ լույս, որի թափանցիկությունը մեր ազգային անհատականության՝ մի պահ ասես հաղթահարված, բայց ահա վերստին հառնած վերացականության՝ ծայրահեղորեն նրբացած ու ներխտացած արտապատկերն է (ձեւավորող պահ), իսկ ինքը՝ լույսը, այդ նույն անհատականության՝ մի պահ կարծես հաղթանակ տարած, բայց այս դեպքում նորից նահանջած թանձրացականությունը (ձեւավորվող կամ նյութական պահ), որոնք, ներգրավվելով վերացականի ու թանձրացականի այս վերջնական գերհամադրական ոլորտը, կերտում են ժողովրդի վեհագույն երկնաերկրային կերպարը, որի խորհրդանշային նախակերպը արտահայտելու ընդունակ հասկացությունը թերեւս միակն է՝ Կոմիտաս:

ՀԱՎԵԼՎԱԾԸ

Շարադրանքը սեղմելու եւ որոշ առաջադրած դրույթներ լրացուցիչ կերպով լուսաբանելու նպատակով ստորեւ հատվածներ են բերվում հեղինակի՝ պարբերական մամուլում հրատարկված մի շարք հոդվածներից: Այդ հատվածների մի մասը (օրինակ՝ առաջինը) հնարավոր է դիտել որպես «Հայաստան-

աշխարհ» թեմայով դիցույթներ (միֆոլոգեմներ) ստեղծելու փորձ: Բանն այն է, որ ըստ հեղինակի՝ առնվազն ավելի բնական է մտահայել սեփական դիցույթներ, քան հետեւելով մեր քաղաքակրթական դարի անդրգիտական (մետագիտական) նշանաբանական-մեկնարկատաշին (հերմենեւտիկ) միտումին՝ հարեանցիորեն կազմահատել ուրիշներինը:

1. «... լավատեսորեն իրատես լինելու մեր միակ փաստարկն այն է, որ մեր ժողովրդի գրեթե ողջ կյանքն այս մոլորակի վրա ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ իրական անհնարինություն: Դա, ըստ իս, պայմանավորված է մեր ժողովրդի՝ համաշխարհային փորձարկու (գյուտարար, դարբին) եւ մեր երկրի՝ համաշխարհային փորձադաշտ (գյուտախցիկ, դարբնոց) լինելու հանգամանքով: Մենք շատ բաներում առաջինն ենք եղել՝ քրիստոնեությունն եւ վերածնունդ, ճարտարապետական որոշ ձեւեր եւ սիրային քնարերգություն՝ նորժամանակյա իմաստով, իսկ գալիք հազարամյակի շեմին՝ ժողովրդավարության նոր ձեւերի պայթյունանման ծավալում. այսպիսին է մեր պատմական փորձարարության-նորարարության՝ հավանաբար թերի ցուցակը: Ասես գերագույն ուժերը մեզ վրա փորձեր են կատարում եւ, արդյունքին հավանություն տալու դեպքում, տարածում այլուր: Ուրեմն բնական պիտի համարել, որ մեր կրած անհաջողություններն ու մեր տված զոհերը բազմաթիվ են, որ քչերն են գիտակցում, ասենք, Նարեկացու մեծ էքսպերիմենտի՝ տիեզերածավալ, այլ ոչ թե զուտ ազգային ընդգրկումը, որ մեծ է նաեւ (ու որքան անարդարացի) մեր դժգոհությունը այլազգիների կողմից անգամ Նարեկացու մակարդակով հաճախ անմիջապես չնկատվելու ու չգնահատվելու առիթով, քանի որ ոգեղեն սերմերը, մարմնեղենների նման, կարող են այդպիսին մնալ ու ծլել միայն մթության ու լռության առեղծվածայնությամբ տոգորված միջավայրում» («Անդրարձ», 1992, թիվ 3, էջ 6):

2. «Ազգայնականների այս հեթանոսամետ քարոզում նշմարելի է բնության աստվածային հորինվածքը վերագտնելու առողջ միտումը, որը, ըստ իս, ոչ միայն չի մերժում, այլեւ, ընդհակառակը, լրացնում է քրիստոնեական մարդամետ քարոզը»: Թյուր պատկերացում է, թե իբր «քրիստոնեությունը ամենաներող, դրանով իսկ՝ մարդկանց ու ժողովուրդների հոգին ուժասպառող կրոն է: Այնինչ քրիստոնեության առանձնահատկությունը... ոչ թե սոսկ գթասրտությունն է, այլ ամենից առաջ՝ անհատականության զորության ու ծաղկման հաստատումը. նրա իդեալը հենց ճշմարտության, գեղեցկության, բարու մարտիկն է՝ ազատորեն նպատակամուղ ինքնակերտ անհատը: Այդ կրոնի իդեալական պատկերն ու խորհրդանիշը հզոր ասպետականությունն է՝ բառիս ամենաընդգրկուն առումով: Իմ, ավանդ, դժվար իրագործելի երազանքն այն է, որ բոլոր կուսակցությունների փոխարեն ստեղծվի «համազգային ասպետական անկուսակցություն»..., որի անդամ կդառնա ամեն ոք այն պահին, երբ այս աշխարհից ավլի-հանի նրանում կուսակված աղբը, իսկ թե ինչպես՝ մարդու կյանք փրկելով, ծառ տնկելով, թե ամանեղեն լվանալով կամ որեւէ այլ՝ աստվածահաճո գործով, առանձին կարեւորություն չունի: «Կուսակցություն» ասածի ներդաշնակ (սատանայական խարդախումներից գերծ)՝ ինձ հասկանալի տարատեսակը ներկայացնում են միջնադարյան այն ասպետները, որոնց միակ նպատակն է եղել (ինչպես ասում են)՝ «Նովանավորել այրիներին եւ որբերին» (արդի պայմաններում այդ բանաձեւը, ըստ երետւյթին, պետք է հնչեր հետեւյալ կերպ. «Նովանավորել դրան ու կապեր չունեցողներին») («Անդրարձ», 1991, թիվ 33, էջ 5):

3. «...Խոսքը բնավ սեփական կամ այլազգի արժեքները լոկ «իմանալու» կամ «ուսումնասիրելու» մասին չէ: Նման արտաքին-ճանաչողական դիրքորոշման դեպքում անգամ հայրենասիրությունը վերածվում է անկենդան վերացական ինքնաներշնչման: Ազգի ներկայացուցիչ, ասենք՝ հայ, հենց

հնարավոր է լինել՝ անդադրում վերածնվելով որպես այդպիսին եւ ինքն իրեն վերստեղծելով դրա համար... Անցյալը կվերակենդանանա միայն այն դեպքում, եթե մենք այն ոչ միայն վերհիշենք, այլեւ նորոգենք եւ ներկայի միջով ինքներս տանենք առաջ՝ դեպի ապագա. եւ միայն այդ դեպքում նա՝ այդ անցյալը, մեզ իրավունք կընձեռի հպարտանալ իրենով (եւ մեզնով՝ նրա արժանավոր ժառանգորդ-զարգացնողներով)». «Հայաստանի Հանրապետություն», 27 մարտի 1991 թ.):

4. Ազգային իդեալը չընկալողներից «ամենեւին էլ ավելի բարձր չեմ դասում այն հայերին, ովքեր փակում են իրենց իսկ առջեւ եւ, ինչը վատթարագույնն է, կցանկայնային փակել ժողովրդի առջեւ պատմական ու մշակութային, կրոնական ու անդրբնութենական (մետաֆիզիկական) համաշխարհային հարստությունների մուտքը՝ ըստ երեւոյթին վախենալով այդ հարստությունների օվկիանում սեփական ինքնությանը դսվաճանելուց. մի բան, որն օբյեկտիվորեն նշանակում է ժողովրդին պահել խավարի մեջ՝ նրան փորձելով հաղորդել, այսպես ասած, «քարանձավային» հոգեբանություն (ինչի անխուսափելի հետեւանքը սեփական թերարժեքության կամ, ավելի պարզ, խեղճության անհիմն ու խիստ անցանկալի, հաճախ ազդեցիկ պոռթկումներով դրսևտրվող զգացողությունն է): Մեր ներքին հաստատման ու ազատագրման հնարավոր ճանապարհներից մեկը «եվրոպական-մարդակենտրոն եւ հնդկական-աստվածակենտրոն» մեզ այդքան հոգեհարազատ մեծ ոգեղեն աշխարհների ներդաշնակումն ու միահյուսումն է՝ մեր ազգային ինքնության բեկմամբ» (հարցի լուծման այլ եղանակ պարզապես չկա... մեր ժողովրդի հոգեկան նկարագրի ու գլխավոր կենսագծի համար վարից պարտադրվող «քարանձավային» (անգիտակցական ազգայինով սահմանափակվող) եւ վերից (Մոսկվայից) պարտադրվող «հարթավայրային» (բոլորին համահարթող՝ ապազգայնացնող) կաղապարներից բացի հնարավոր է առաջարկել ու փայլուն կերպով կյանքում մարմնավորել

նաեւ «լեռնային» կամ «արծվային» (ազատորեն ընտրվող, գիտակցորեն ազգային, մեզ համար առավել չափով օրգանական, ուստի եւ սեփական խեղճության բարդոյթի հաղթահարմանը նպաստող) կենսաձեւ: Առաջին կաղապարի տարբերակիչ հատկությունը՝ ազգային, երկրորդինը ապազգային (կոսմոպոլիտական) սնապարծությունն է, այնինչ երրորդինը՝ ազգային **հպարտությունը** (ն. տ.):

5. «... անհատն իբրեւ ընդգծված ներաշխարհի կրող բավականին վաղ շրջանում ... արթնացավ, ասեմք, Նարեկացու, ավելի ուշ՝ Քուչակի եւ մյուս քնարերգուների, ինչպես նաեւ նրանց այն ժամանակակիցների մեջ, որոնց ներաշխարհի արտահայտիչներ եղան այդ մեծ բանաստեղծները»: Սակայն որպես ազգի զանգվածային առանձնահատկություն մնում էր այդ կոնկրետ անհատականության վերացական հակապատկերի համատարած ծավալումը: Ազգային թերությունները հաճախ... «առաջինությունների՝ ծայրահեղության հասցրած արտահայտությունն են. այսպես, անհատի սկզբունքը, պայծառ անհատականության ստեղծագործ վեհ ինքնահաստատումից, ամեն քայլափոխի, հաճախ նաեւ աննկատելիորեն սնանկանալով, այլասերվում-վերածվում է փուչ անհատապաշտության՝ հաճախ ուրիշի հաշվին կատարվող... ստոր ինքնահաստատման»: («Դիտողություններ Շիլլերի «Երրորդ նամակի վերաբերյալ». «Անդրադարձ», 1992, ապրիլ, նո 9):

6. «Ազգը ըմբռնելի է ոչ թե որպես վերացական միաչափ կաղապար, որը պարտադրվում է նրա բոլոր ներկայացուցիչներին, այլ որպես մի հանրություն, որն իրականում գոյություն ունի միայն նրան կազմավորող **անհատների յուրակերպության՝** նրանց կատարյալ ինքնության տեսքով»: Հայերից դուրս Հայաստանը կա «միայն իբրեւ մեռյալ ու մեռցնող վերացարկում»: Մենք հոգնել ենք նման «ներկայացուցչությունից», այդ թվում՝ ամեն մարդու մեջ ինչ-որ ազգի «ներկայացուցիչ» տեսնելու՝ զուտ խորհրդային սովորույթից: **Անհատ հայը**

առաջին հերթին հայ անհատ է, եւ միայն այդքանով... է որոշվում նրա հայ լինելը («Մաշտոց», 1991թ., թիվ 10):

EDUARD ATAYAN. The Abstract and the Concrete in the National Sphere. Summary.

According to the author a people can be treated in terms of three clearly distinguishable characteristics: tribal-natural, folk-cultural and national-civilized, which form successive steps in the life of a given people and are at the same time ever-present psychological layers coexisting in its consciousness.

The simultaneous interaction of the natural (physical) and the supernatural (metaphysical) generates the true nature of the sphere relating to people, in which those three layers begin to permeate one another, making up an organic whole. A people lacking national characteristics is blind (deprived of self-consciousness), while the nation deprived of folk characteristics is empty (cosmopolitan). The isolated-abstract existence of the above-stated ingredients may turn out menacing to the authenticity of a people, whereas their harmonious coherence within the concrete-free wholeness of the tribe-folk-nation is the way to its true self-realization.

ЭДУАРД АТАЯН. Армяне и Аик: абстрактное и конкретное в национальной сфере. Резюме.

В явлениях, относимых к сфере народного, различаются биологически-племенной, собственно народный-культурный и национально-цивилизационный моменты, выступающие и как последовательные ступени жизни народа, и как постоянно сосуществующие в его сознании психологические слои. Во всем своем объеме и в полноте своего содержания народное актуализуется одновременно как природно-физическое и сверхприродно-метафизическое (духовное) образование, где органически взаимопроникают три отмеченных слоя. Так, народное без национального слепо (лишено самосознания), а национальное без народного пусто (космополитично). В нашей нынешней ситуации основная опасность состоит в раздельном-абстрактном существовании отмеченных ингредиентов народной стихии, а путь к подлинному самоформлению и самоутверждению последней - их гармонизация в конкретном-свободном племенном-народном-национальном целом.